

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅԳ Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ



Մեր համեստ դիտաւորութիւնն է, սոյն յօդուածոյս մէջ, նախ յիշողութիւն առնել համառօտիւ՝ վերաբերութեամբ մի զրազրի մատենի, գրուած երկու հարիւր քսան և երեք ամօք յառաջ Հնդկաստանի Մադրաս քաղաքում, ապա անցանել Հայոց հաստատման նկարագրութեանն Մադրասի մերձակայ Միլափու հնադարեայ քաղաքում և, պարբերաբար, հուսկ ուրեմն՝ ակնհայտ մի ձգել Գրիստոնէութեան սկզբնաւորութեան ուսանց դերակատարաց և նոցա հետևորդից գործառնութեանց վերայ՝ Հարաւային Հնդկաստանում, մինչև Միջին Դարուց ժամանակներն:

Լոնտոնի Բրիտանական Թանգարանին մէջ՝ ինձամօք պահպանեալ մի հարիւր յիսուն և երկու Հայկական կարևոր Հին զրազրից կարգում միայն մի հատն՝ գրուած է Հարաւային Հնդկաստանում (Մադրասում), բաղկացեալ իբր երկու հարիւր Թերթերէ և րովանդակելով վկայաբանութիւնք վարուց Մարտիրոսաց և Տեսու-

թիւնք ի վերայ Անկանոնականաց. յաւել ընտանի նորոյս սերնդոց Ոսկիփորիկ աւուամբ որոյ Յիշատակարան, որ զոյ գետեղեալ ի վերջ Գրազգրին, ահաւասիկ ընդօրինակեմք անփոփոխ՝ յօդուտ սիրողաց Հայկական հնարանութեանց: — « Ով սիրելիք ի տէր եթէ կարդալով կամ օրինակելով խնդրեմ ձեզանէ որ զրողաց սորին զմալէրն և ծնողքն իւր զհայրն և զմայրն զնանայջանն և զհայրն Ովաննէս սին մեղացն Թողութիւն խնդրէք և մի բերան ողորմի տացուք և զուր յիշեալ լինիջիք ի տէր յաւուրն դատաստանի Գրիստոսի: Արդ զրեցու ի փորը քաղաք որ կոչի Ձինի փաթայն՝ և է օթեանն իմ ի Լուպահան որ մեծ և հոչակ ի հայաստան և ի ջուղան և է առաջնորդ մեր հոգևոր եպիսկոպոս տէր՝... և է սրբազայն և առաքել լայնորն: Եւ է իշխօզ և իշխան քսայտէր զպրի Դօգազն և հոչի մեծայմեծաց և խօսակցից Թգրաց և ի պարծանս քսասիրաց: Արդ եղև Թիւն փորը՝ ձգ. նոր ամսին ի յ. ումն »:

1. British Museum, Թի. Harl. 5429.

2. Մադրաս քաղաքի նախկին անունն էր Ձինեփու-թանում, որ Հնդկաց Տամիլ լեզուաւ նշանակէ « փոքր ժողջադաշտ » (Ձինեա, յիցի կամ սինեա = փոքր և փարանա = Ծովաջադաշտ):

3. Ստեփաննոս, Նոր Զուլայիցի, նստելով յԱթոռ Առաջնորդութեան Նոր Զուլայի 1684ին, իբր 1696ին մեկնելով է առ Էմիլիանոն հրաւիրեալ լինելով առ կաթողիկոսական Աթոռ, բայց տարազգ Քննանաց մատնութեամբ կնքուած է իւր մահաւանջուն, Երեւանում, բնակի մէջ, 1697ին: Սորան յաւորողը, Ալեքսանդր Նոր Զուլայիցի, բարձրանում է յԱթոռ Առաջնորդութեան երկու տարի ժամանակ անցանելէ յետոյ (1699ին), ուստի 1698ին, երբ այս Յիշատակարանն գրուեցաւ, Նոր Զուլայի Առաջնորդական Աթոռն Թափուր լինելով ոնէ անուն յիշատակուած է՝:

4. Մովսէս Բ. Կաթողիկոս (551-581) զուժարեց, 552ին, Գուրնի Երկրորդ Ժողովն որով Հայոց Թուական սկզբ-

նաւորեցաւ (11 Յուլիս, 552) և այդ սկզբնաւորութեան Հետ Նախ և 552թական Տոմարական Առաջին Մեծ Զատիկան Երբան: Այդ Երջանն աւարտեցաւ 1084ին (552 + 532 = 1084) և Երկրորդն 1616ին (1084 + 532 = 1616): Այդ տարի, այսինքն 1616ին, երբ 552թական երրորդ Երջանն սկսելով վերայ էր, պէտք էր նոր Տոմարացոյց կազմել աւարտելի 2148ին (1616 + 532 = 2148): Նոր Զուլայի զետեանական Աղաքապետ մի, Ագաթա անուամբ, ինքնաբերաբար յաճեմ առնելով այդ կարևոր զործ, սկզբնաւորեալ Մարտ 21 (Ն. Տ. Մարտ 31) 1616ին, յաւուպէս պատրաստեց զոր անկէր: Ագաթան, նոյն ժամանակ, նաև հիմնեց մի նոր Ազգային Թուական, « փոքր » կամ « Աղաքեա »-ի, զոր Նոր Զուլայիցիք զործ անեցին իբր երկու հարիւր և յիսուն տարի: Ուստի սոյն Յիշատակարանին Թուականն, 2Գ. այսինքն փոքր Թուոյն 83Երրորդ տարին, համեմատել ընդ Գամի Տեսան 1698:

Լոնտոնի Հանրային Արձանագրութեանց Պաշտօնատան պատկանելի փոքրիկ Թանգարանին մէջ (Public Records Office Museum, Chancery Lane, London, Case K. N. 113) ի ցոյց դրուած է նամակ մի՝ որ գերականցօրէն հետաքրքրական է վասն մերազնեայ ուսումնասիրողաց որք հետազօտողք են՝ Հայկական հնագիտութեամբ պարապելով։ Թուակիր 4 փետրուար, 1664, տողուած է այն Հրնդկասանի Միլափուռ քաղաքի Հայ Քաղաքապետէն առ Անգղիոյ Արքայն Կարոլոս Բ. Բուռն նամակն գրուած է բովանդակօրէն՝ Փորթուգալերէն լեզուաւ, այնու պատճառաւ որ 1517էն սկսեալ մինչև 1662՝ Միլափուռ փորթուգալացոց տիրապիտութեան ներքոյ էր, ուստի և նոցա լեզուն մի միայն ընթացիկ էրոպական բարբառն էր ի գործածութեան այդ քաղաքի մէջ յընթացս այդ ժամանակամիջոցին և մինչև ժէ՛ դարու վերջն իսկ, և, վասն որոյ, ծանօթ տեղւոյն ուսեալ դասակարգին. սակայն՝ նամակագրին ստորագրեալ անունն, Մարգոս Ըդուարդ, մաքուր և պարզ Հայերէն է։ Վերապահելով առ այժմ մեր նշմանքներն, նախ գետեղեմք ի ներքոյ այդ նամակի մեր Հայերէն թարգմանութիւնն։

« Այն բարերար հոգւովն որ ընակաւ
« նապէս ընկերէ համայն վեհափառու
« Թեանց և որոյ՝ ըստ համբաւոյ հասեալ
« առ իս, վեհափառութիւն Ձեր իսկ՝ առան-
« ձնակի շնորհօք և ինքնիշխանութեամբ էր-
« կընքոյ՝ զոյ ժառանգորդ, Էս, Մարկոս Ռո-

« զադօ՛, Ազգաւ Հայ, Քաղաքապետ՝ յեր-
« կիրան Մէլափուռայ՝, համոզեալ եմ ի
« միտս զի այսու մարթ լինիցի ինձ ա-
« պահելի առ Ձեզ և յերկիր խոնարհիլ
« յոտս վեհափառութեան Ձերոյ, ըստ
« մասնաւորի աղաչելով ի զթոռաւոր Արեւ-
« նէդ՝ զիջանիլ ի հայցուած իմ ի մա-
« կագրել զիս ի շարս հաւատարիմ ձեռ-
« նածու հպատակաց Ձերոց. զի պատաղիմ
« խորին մտահոգութեամբ՝ շքեղանալ այ-
« զու շնորհաշուք կոչմամբ։ Թէպէտ և
« անցեցանեմ զկեանս իմ յայսոսիկ հե-
« ոււոր կողմանս (սակայն և այնպէս) ան-
« ձամբ անձին երաշխաւորիմ յամենայնիւ՝
« ընդ խոնարհատանս իմ զոր կրեմ առ
« պիքնապայծառ հոչակ վեհափառութեան
« Ձերոյ, Էս ամենեքին այնորիկ որք ա-
« մենապատուական են յարտադրութիւնս
« երկրիս և, ըստ նմին օրինակի, ամե-
« նայն ինչ որ ունի զյարգ և զարժէս,
« Էս, որպէս Քաղաքապետ սոյն երկրիս,
« ձօնեմ ի ներքոյ ոտից վեհափառութեան
« Ձերոյ, Ո՛չ ճառեմ զքանս զայսոսիկ
« որպէս զառհասատեցայս արժանաւորու-
« Թեան իմով՝ այլ որպէս զուխտս երա-
« իայրեաց հաւատոց իմոց առ յապակ
« վատահ լինելով զի Արքայական հոգի
« վեհափառութեանդ ո՛չ ունի արհամար-
« հել այլ բարեգթօրէն հիւրընկալնուլ
« զայնոսիկ որք խոնարհաբար հայցեն
« զճովանաւորութիւն և զպաշտպանու-
« Թիւն վեհափառութեան Ձերոյ, Մատանի
« մի մեծաքանակ՝ կապոյտ զոհարաւ՝.
« այլ մատանի մի ևս մեծազոյն՝ ոսկե-

1. Շնորհապարտ եմ առ Miss Stuart Browne, Քարտուղարուէն Լոնտոնի Հայոց Միացեալ Ընկերութեան և յայտնի զբազէս և բանաստեղծուէի, որ առաւ լին անգամ տեսնելով այս նամակ՝ իմ ուշադրութիւնն հրաւիրեց առ այն։

2. Ի ստորե նամակին՝ Հայերէն ստորագրութիւնն է Ըդուարդ որոյ, աներկբայ, « Ռօզադօ » փորթուգալերէն որդեգրութիւնն է,

3. Guernador.

4. Melapor կամ Meleupor ըստ Փորթուգալացոց յորշորշման, Mylopor ըստ Անգղիացոց և Միլափուռ

ըստ շնդկահայոց։ Անկանի իբր հիւք մոնալափ առ հարաւակողմն Մարգոս քաղաքի և է մի ի հեղօյն քաղաքաց Նարաւային շնդկաստանի։ Սկսեալ ԺՁ. զարմ սկիզբէն Միլափուռ, փոխ առ փոխ, ծանօթ է նաեւ « Սուրբ Թոմով » անունամբ (St. Thomé), ի պատճառս առանձնութեանն Թէ Թոմովս Առաքեալ նահատակեցաւ Մեւափուռում 68 թուականին։

5. Նշանակէ Անուածին վեհափառութեանը։

6. Robtn, ըստ բնագրին. բայց Թուի մեզ նշանակէ կամ Շափիզայ (Sapphire), Այն երկնազոյն (Turquoise) և կամ Տապազին (Topaz)։

« գոյն յակնթաւ¹, և մատանի մի կարմիր
 « յակնթաւ² փոքրագոյն քան զվեր յի-
 « շեալսն. մի հատ մարգարիտ բարեմայ³.
 « պատուական կարմիր յակնթ մի բեր-
 « կրալի ի տեսն⁴ ընդելուզեալ ոսկեկուռ.
 « գոհար մի վասն կրելոյ ի վերայ լան-
 « ջաց և կարելի առ ի զատուցանել ի
 « մասունս⁵ լինելով ակն մի հանդերձ
 « երեքկին կապոյտ և ճերմակ շերտիւք⁶.
 « և ևս ակն մի ծանրարժէք և մեծաքա-
 « նակ զատողութեան բնիկ երկրականաց
 « տեղոյս որք վկայեն առգայն զոլ մեր-
 « ձաւոր ական կարկեհանի⁷. Այսորիկ ա-
 « մենեքին, ամփոփեալ ի փոքրիկ տուփ մի
 « ոսկեկուռ և կնքեալ նոյն իսկ կնքով
 « որ առ երկ ստորագրեալ անուանս, նուի-
 « բեմ և գետեղեմ ի ներքոյ ոտից գերիշ-
 « խան վեհափառութեան Չերոյ, առ որ
 « պաղատիմ ողորմագին, զի որովհետեւ
 « ահաւասիկ հլու հպատակ և ծառայ եմ
 « Չեր՝ շնորհաբաշխութեամբ Չերով յայ-
 « տարաբլ գիս շնորհեսնիք յայստիկ
 « յԱրեւելեան կողմանս՝ որպէս նուիրա-
 « գրեալ ոմն առ վեհափառութիւն Չեր:
 « Եւ արդ՝ որովհետեւ գործ նաւաշինու-
 « թեան, ըստ ամենայնի լիակատար, զը-
 « ժուարին է յայստիկ կողմանս, ազեր-
 « սեմ առ վեհափառութիւն Չեր պարգեւել
 « ինձ զնաւ⁸ մի, որով ծառայք ծառայի
 « վեհափառութեան Չերոյ նաւորդելով ի

« մատենս Արեւելից՝ շահեսցեն զիրս պա-
 « տուականս և մեծարժէս առ ի նուիրումն,
 « անընդհատաբար, առ վեհափառութիւն
 « Չեր ըստ հաճոյից Չերոց՝ և որպէս
 « պարտաճանաչութիւն երախտագէտ ծա-
 « ռայի Չերոյ: Եւ վստահ ի հաւատ իմ
 « ի լրումն նպատակի Աղիւրագրիս այս
 « և ոչ նուազ ի հաշտ հոգի վեհափա-
 « ռութեան Չերոյ, աղօթեմ առ Յիսուս
 « Քրիստոս շնորհել վեհափառութեան Չե-
 « ռում զյաղթանակս առաւելեալ ևս քան
 « զես ընդ բազմապատիկս ի վերայ ապրս-
 « տամբ հպատակաց Չերոց, որք ոսոխ
 « հանդիսացեալ են ընդդէմ Որինացն Քրիս-
 « տոսի, որպէս և այլ ամենայն բարեյա-
 « շնորդութիւն և երջանկութիւն ըստ ըզծից
 « Չերոց »:

Մէլապոր, 4 փետրուար, Յամին 1664:

Վեհափառութեան Չերում,
 Խոնարս և հաւատարիմ ծառայ,
 Կնիք (Ըստ Նալեյրեհ) Մարգոս Ընդագլ:

Ի յետին կողմն գրութեանն գետեղեալ
 է Հասցէն: — « Առ Երորն Շնորհազարդ
 « և Ամենապայծառ վեհափառութեան, Դոմ
 « Կարլոս¹. Թագաւորին Անգլիոյ և Գերբշ-
 « խան Տեառն Մեծին Բրիտանիոյ, որում
 « Աժ. պահպանեսցէ կայլն²: Սորան հետեի
 « Ի Քաղաքապետէն Մէլապորայ »:

1. Դեղին Աղամանդ (Yellow Diamond) և կամ
 Ոսկեքար (Chrysolite).

2. Հաւանականաբար՝ հանրածանոթ մարգարտաբեր
 Բահրէյն (Bahrein) կղզիք ի Պարսից Երկրանոց, չորս
 փորթուղիքեք տեղապահեցին 1507էն մինչեւ 1622 երբ
 Մեծն Եւս Աբբաս արտաքսեց նոցա այդ կղզիներէց:
 Երբեք նաեւ որ « Բար », ըստ ներկան շնչորան Sir
 Richard Temple, կազմէ ամենաբնական մասնիկ մի,
 շնչորեքն լեզուաւ, յոգեալ ընդ անուանք քաղաքաց Նա-
 բաւային շնչորաստանի՝ որք ի Տեհնէվէլի Նահանգ և
 որ նշանակէ « ափ »: Հանրածանոթ են սոյն Տեհնէվէլիի
 ծովափանց մարգարտի արտածութիւնք (South In-
 dian Pearl Fishery), Թերեւս նամականիս ակնար-
 կէ առ վերջինս բայց, ըստ մեզ, յաւելեալ անական թուի
 առաջինն:

3. Եղեգնեքար, Sardonyx, և կամ Onyx

4. Carbuncle, որ բազմեց կոչի նաեւ Pyrope և
 Hyacinth և նոյն է որպէս « քարեկէթ », Երբայեքերն
 լեզուաւ, որ ի հնումն՝ կազմէր մի յակնց պատուական,
 նազ Բաշանայազեալին լանջապանակին (ՏԵ՝, Գիրք
 Ելիք, ԺԲ. 17, ԼԹ. 10).

5. Արեւելեան շնչկաց Բնկերութեան Պաշտօնական
 Արժանագրութեանց մէջ ընթերցուած ենք որ ԺԻ. Դա-
 ռու մէջերում ամենամեծ նաւերն յաւել չ'էին քան 600
 տոնակշիռ (600 Tono) և 100 և 200 տոնակշիռներն
 առ հասարակ էին: Ուստի՝ տեսանելի է որ Պարսն
 Մարկոս Ընդագլի սոյն խնդիրք ահազնաճախ բան մէ չ'էր:

6. Կարոլոս Բ. (Charles II.) Թագաւոր Մեծին
 Բրիտանիոյ 1660-1685. Քաղապետութեամբ՝ հարպիկ
 և Ժողովրդապետ բայց բարոյականութեամբ՝ ոչ ըստ
 բնականից, որով շահեցաւ « Merry Monarch » (Ձուար-
 ան Մարգարտ) Տեղադրան:

ի միջին կողմն գրութեանն (որ երկծալ « մանութիւն Նորին Սպաներէն լեզուաւ »)
է) զոյ հետեւեալ Անգղիերէն մակագրու. « ուղղեալ առ Թագաւորն. Թուեալ ի 4
թիւն. — « Գրութիւն ի Մարկոս Ռազադօէ՝ « Յունուարի », 1664, և պատեհապէս
« Քաղաքապետ Միլափուռայ (և Թարգ. « ստացեալ Յունիսին, 1664 » :
(Շարումաղիք) Գ. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՐԵԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

ՅՈՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԵԱԿԱԿԱՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՍՈՎՐԵՑՈՒՐ ԻՆՃ, ո՛վ Մուսա խարտիշահեր և ժպտուն,
ինչպէ՛ս խոփերն արօրի կը ճմլեն ծոցն հողերուն,

Երբ արագիլն երդիքէն հայրենական գիւղակին
կը մեկնի տաք երկիրներ վերադարձով հրճուազին,

Երբ այգիէն ուր հնչեց կեանքին ծիծաղն հեշտալուր,
կու գան հովուի մը սրինգին եղանակները տըխուր...

Սովրեցու՛ր Ինձ աշխատանքն առոյգ և յաղթ եզներուն
Որոնք իրենց լուծին վրայ կը կրեն ոսկին արևուն:

Ինչպէ՛ս մաճկալ պարմանին վարժութիւնով հընաւանդ
կ'ուղղէ ընթացքը խոփին ոյժքերուն մէջ արգաւանդ,

Ու կը բացուին ակօսներ որոնց մէջէն կը ժայթքի
Չմբուխտէ ծոփն հասկերուն, և ապա հունձքը ոսկի...

Սովրեցու՛ր Ինձ, ո՛վ Մուսա, ինչպէ՛ս անդերը կ'ըլլան
Միրանէվառ ծովակներ արևին մէջ կէսօրուան,

Երբ ուռիին շուքին տակ ուր կ'անցնի վտակն արծաթէ,
Մեղամաղձիկ պատանին իր սըրինգին հետ կ'երգէ.

Եւ հին կոճղի մը վըրայ, հեռուն ամառոյ ճամբուն մօտ,
Ոսկի ծնծղան ճըպուռին կը հնչէ միշտ արևոտ...

Բայց նախ ինծի սովրեցու՛ր ժամանակն երբ կը ցանեն
Մոցը խաւար հերկերուն ցորենհատիկն ոսկեղէն:

Ինչպէս առոյգ պարմանին, կամ ծերունին ալեգարդ
Ակօսներէն կ'անցնին լուռ իրիկուններն աստղազարդ,

1. Ընթագ, ըստ Հայերէն բուն ստորագրութեան:

2. Իրօր, բնագրին մէջ, ամաթիւն է և փետրուար: